ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

ԴԵՐՁՅԱՆ Հ. Մ.

Պետության անվտանգության ապահովման խնդիրը նույնքան վաղեմություն ունի, որքան հենց ինքը՝ պետությունը: Լինելով հանրային իշխանության ապարատ՝ պետությունն իր ստեղծման (առաջացման) պահից ստանձնել է բնակչության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պաշտպանության երաշխավորի պարտականությունները:

Անվտանգության ապահովման խնդիրն առաջնային է ցանկացած պետության համար՝ անկախ նրա տնտեսական և քաղաքական կյանքի իրավիճակից և մյուս գործոններից: Այդ է պատճառը, որ քննվող խնդրի նկատմամբ վերաբերմունքի էությունը ժամանակի ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել: Լավագույն դեպքում փոխվել է խնդրի իրագործման մեթոդաբանությունը՝ կախված համամարդկային քաղաքակրթությանը տվյալ պետության հաղորդակցության, նրա արժեքների յուրացման աստիճանից:

Անվտանգության ապահովման խնդրի առանձին բաղադրամասերի, այդ թվում՝ երկրի տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության հարցերի վերաբերյալ ժամանակակից պատկերացումներն ու մոտեցումներն ըստ էության ըմբռնելու համար նպատակահարմար է դիտարկել քննվող խնդիրների շուրջ վաղ ժամանակներում իշխող պատկերացումներն ու գործադրված մոտեցումները:

Անվտանգության ապահովման խնդրի ուսումնասիրության պատմական մեթոդի կիրառումը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ հիմնահարցի նկատմամբ ժամանակակից վերաբերմունքի հիմքում մինչ օրս պահպանվել են այդ առնչությամբ վաղնջական ժամանակներում իրենց կենսունակությունն ապացուցած պատկերացումներն ու մոտեցումները: Ճիշտ է, մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ հայ իրավական մտքի հուշարձաններն այնքան էլ հարուստ տեղեկություններ չեն հաղորդում: Պատճառն այն է, որ դրանց զգալի մասն ունեցել է հիմնականում կրոնական (դավանաբանական) ուղղվածություն, իսկ երկրի պաշտպանունակությունն իբրև առավելապես աշխարհիկ մտածողության և գործելակերպի տիրույթում գտնվող խնդիր, հիշյալ աղբյուրներում արժանի ուշադրության չի արժանացել:

Հայ իրավական մտքի հնագույն հուշարձաններում երկրի անվտանգության ապահովման խնդիրն ընկալվել է գլխավորապես արտաքին պաշտպանունակության ամրապնդման իմաստով և կապվել է աստվածային գործերի կամ աստվածային կամքի կենսագործման հետ: Այսպես, հայոց եկեղեցական հավաքների, այդ թվում՝ Աշտիշատի (354 թ.), Շահապիվանի (444 թ.), Դվինի (առաջինը՝ 507 թ., երկրորդը՝ 555 թ., երրորդը՝ 609 թ., չորրորդը՝ 648 թ., հինգերորդը՝ 719 թ.), Մանազկերտի (726 թ.), Պարտավի (771 թ.), Երնջակի (842 թ.), Շիրակավանի (855-876 թթ.), Անիի (առաջինը՝ 970 թ., երկրորդը՝ 1036 թ.), Հռոմկլայի (1179 թ.), Սիսի (առաջինը՝ 1204 թ., երկրորդը՝ 1243 թ., երրորդը՝ 1289 թ., չորրոր-

դը՝ 1343 թ., հինգերորդը՝ 1361 թ.) և Վաղարշապատի (1441 թ.) ժողովների ընդունած կանոնները կարգավորում էին հիմնականում ժառանգության և ամուսնաընտանեկան հարաբերություններ[1]: Լավագույն դեպքում հիշյալ ակտերում երկրի անվտանգության ապահովման խնդիրը քողարկված էր դարձյալ կանոնական իրավունքի նորմերով սահմանվող դրույթների ենթատեքստում: Պատահական չպետք է համարել, որ եկեղեցական ժողովների կազմակերպմանն ու որոշումների (կանոնների) ընդունմանը մասնակից էին դառնում ոչ միայն հոգևորականները: Այսպես, օրինակ, «444 թ. հուլիսի 24-ին Շահապիվանում մեծ բազմություն հավաքվեց՝ տոնելու Նավասարդը (նոր տարին): Այնտեղ էին գտնվում հայոց բանակը, նախարարները, ազատները (մանր ֆեոդալները), այրուձին և շինականները, ինչպես նաև եկեղեցու ծառայողներ, 40 եպիսկոպոս, բազում հոգևորականություն: Դա պետք է դառնար համազգային բարեփոխումների առաջին ժողով... Ժողովը եկեղեցական էր... նախարարները, ազատները, այրուձին և շինականները միաձայն էին բոլոր որոշումներում...»[2]: Թեև ժողովները եկեղեցական կողմնորոշում ունեին, այնուամենայնիվ, դրանց ընդունած որոշումները զուրկ չէին նաև քաղաքական (աշխարհիկ) իմաստից, քանզի «նրբորեն» շոշափում էին նաև պետության անվտանգության ոլորտի խնդիրներ: Ինչպես նկատվել է, «Շահապիվանի ժողովն ընդունեց հեթանոսական սովորույթների դեմ ուղղված իրավական նորմեր, ըստ էության, մազդեականության և պարսկական գաղափարախոսության տարածման դեմ...: Միաժամանակ, 449 թ. Արտաշատում գումարված ժողովում Հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդները՝ նախարարների և ամենայն հայոց ազգի համաձայնությամբ, վերջնականապես մերժեցին պարսից շահ Հազկերտ II-ի պահանջը՝ ընդունել զրադաշտականություն և վճռականորեն հաստատեցին իրենց նվիրվածությունը քրիստոնեական հավատին... »[3]:

Հայ իրավական մտքի հին շրջանի հուշարձաններից շատերը պարունակել են դրույթներ, որոնք, ըստ էության, արտացոլում են պետության անվտանգության ապահովման խնդիրները: Իհարկե, հաշվի առնելով մարդկային քաղաքակրթության զարգացման աստիճանը և իրավագիտական մտքի տվյալ ժամանակաշրջանի նվաճումների մակարդակը՝ հիշյալ աղբյուրների դրույթները պետության անվտանգության ապահովման կատարյալ մոդելներ և ավարտուն կառուցակարգեր չէին նախատեսում: Այնուամենայնիվ, մարդկանց վարքագծի առանձին բաղադրամասեր սահմանելու շնորհիվ, դրանք սկսում են ուրվագծել անվտանգության ապահովման անհրաժեշտությունը՝ իրավական հիմք հանդիսանալով քննարկվող ոլորտի կարգավորմանը ծառայող ապագա օրենսդրության ձևավորման համար: Օրինակ՝ պետության տնտեսական անվտանգությանն առնչվող դրույթներ է պարունակել ուրարտական թագավորներ Իշպուինիի (825-810 թթ. մ.թ.ա.) և Մենուայի (810-786 թթ. մ.թ.ա.) կողմից համատեղ կազմված երկլեզվյան արձանագրությունը, ըստ որի՝ «Ով Խալդի աստծո դարպասների մոտից անասուն քշի-տանի, կարհամարհի իր ոչնչացումը: Եթե Արդինի

---

[1] Մանրամասն տե՛ս ***Ակագյան Ռ. Հ.,*** Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ.-մ.թ. XIXդ.), Ե., 2001, հ. 1, էջ 49-73:

[2] Նույն տեղում, էջ 67:

[3] Նույն տեղում, էջ 69:

(Մուսասիր) քաղաքը լսի, որ մեկը Խալդյան պարիսպների մոտից անասուն է տանում, ով ում պարտադրի անել այդ, թող Խալդի աստվածը ոչնչացնի նրա սերմը երկրի երեսից...»[4]:

Հայ իրավական մտքի այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են՝ Հովհան Օձնեցու, Դավիթ Ալավկաորդու Կանոնները, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և այլն, ունենալով բացառապես կամ գլխավորապես կրոնական կողմնորոշում, ուշադրությունից դուրս են թողել աշխարհիկ խնդիրների, այդ թվում՝ երկրի պաշտպանության և անվտանգության հարցերի կարգավորումը:

Թերևս, պետության անվտանգության ապահովման ոլորտում հաջողված քայլ կարելի է համարել մոնղոլական մեծ խան Մանգուի ու Կիլիկյան հայոց Հեթում թագավորի միջև կնքված պայմանագիրը, որը նվիրված էր մոնղոլների և քրիստոնյաների միջև հավիտենական խաղաղություն ու բարեկամություն հաստատելու նպատակին: Համաձայնագիրը պարունակում էր տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի (Կիլիկյան թագավորության) անվտանգության ապահովմանը ծառայող ռազմավարական կարևոր դրույթներ[5]:

Ազգային անվտանգության ապահովման խնդիրների հանդեպ պատշաճ հետաքրքրություն չեն ցուցաբերել նաև ուշ շրջանի իրավական աղբյուրները: Զարմանալիորեն իրավական կարգավորման առարկա չեն դարձել պետության գոյապահպանման համար ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ պետության սահմանների ամրագրումը, տարածքային ամբողջականությունը, անձեռնմխելիությունը, միջպետական հաղորդակցությունը և այլն: Թերևս, այս տեսանկյունից համեմատաբար աչքի է ընկնում հայ իրավունքի կարևոր հուշարձաններից մեկը՝ «Որոգայթ փառաց»-ը (1773թ.): Չնայած չափազանց ընդհանուր մակարդակով, այնուամենայնիվ, նրանում արտացոլված են մեզ հետաքրքրող հիմնախնդրի առանձին բաղադրամասերը:

Նախ և առաջ, որ օրինակելի պետք է համարել այժմյան օրենսդրության հիմքերը կառուցելիս, «Որոգայթ փառացն» ամրագրում է Հայաստան երկրի պետական սահմանը: Հայոց երկրում Հայաստանյայց աշխարհին արվող կարգադրությունը սկսվում է նրա տարածքի սահմանումով: «Ճանաչեցինք ու մեր ճանաչածը հաստատեցինք, որ մեր Աղվանից աշխարհից, որտեղից արևն է ծագում, և Ալանաց դռնից դեպի հարավի կողմը, մինչև Կորճկահայք աշխարհը՝ Տավրոս լեռան ստորոտում, այնտեղից էլ դեպի արևմուտք, մինչև մեծ Անտիոքը՝ Միջերկրական ծովի ափին, այնուհետև այստեղից հյուսիս, մինչև Մամեստիա, և այդտեղից դեպի արևմուտք, մինչև Կիլիկիա ու մեր Երրորդ Հայք աշխարհը, Կիլիկիայից էլ դեպի հյուսիս, մինչև Լենոպոնտոս՝ Սև ծովի ափին, ապա այդտեղից դեպի արևելահյուսիս, մինչև Տայք աշխարհը, իսկ Տայքից էլ դեպի արևելք, մինչև Աղվանք աշխարհը և Ալանաց դուռը՝ դարձյալ արևմտյան կողմից, Միջերկրական ծովի ափից՝ Մեծ Անտիոքից դեպի արևելք, այնտեղ, ուր ավարտվում է Տավրոս լեռը, մինչև Կասպից ծովի ափը, Գիլանի սահմանը, իսկ հարավային կողմից՝ Տավրոս լեռան

[4] Նույն տեղում, 76:

[5] Համաձայնագրի բովանդակությունը շարադրված է Ռ.Ավագյանի նշված աշխատության 645-647 էջերում:

ստորոտից դեպի հյուսիս, այն տարածքը, որ ընկած է Սուլթանիայի արևելյան կողմում, մինչև Ալանաց դուռը, և այն տարածքը, որ հարավային կողմից Փոքր Աղբակից տարածվում է մինչև Տայք աշխարհը, նաև այն, որ արևմտյան կողմում Մեծ Անտիոքից դեպի արևմտահյուսիս՝ մինչև Լենոպոնտոս և Լենոպոնտոսից էլ արևելահյուսիս՝ մինչև Տայք աշխարհը, իսկ Տայքից էլ դեպի արևելք, մինչև Ալանաց դուռը, մինչև Կասպից ծովի ափը, այս ամբողջ աշխարհի տարածքը… պիտի լինի ու մնա անունով Հայաստան երկիր, իսկ այնտեղ բնակվողներն իրենց մարդկային վիճակով՝ հայեր»[6]:

«Որոգայթ փառաց»-ի առանձին դրույթներ վերաբերում են հողի՝ իբրև հատուկ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի հարցերին, խնդիրներ, որոնք ոչ պակաս հետաքրքրաշարժ են նաև ազգային անվտանգության տեսանկյունից: «Յուրաքանչյուր անձ,- նշված է այնտեղ,- որն ազգային պատկանելությամբ հայ է և հայ հանրության անդամ, Քրիստոսով մկրտված և Քրիստոսին հավատացյալ, կարող է որպես սեփականություն գնել և վաճառել հողամաս միայն սեփական ազգին և դավանությանը պատկանող անձանցից կամ անձանց այն պայմանով, որ գնողը պարտավոր է հողից ստացած եկամտից Հայոց պետությանը հայկական օրենքներով վճարել հարկ, մաքս և հաս բաժին»[7]:

Դարձյալ ազգային անվտանգության ապահովման համապետական շահերից ելնելով՝ «Որոգայթ փառացը» սահմանում է, որ Հայաստանում ծնված կամ օտար աշխարհից գաղթած և Հայաստանում հաստատված յուրաքանչյուր այլադավան անձ կարող է ունենալ հողամաս, տուն ու բնակարան՝ ժամանակավոր վարձակալմամբ: Նրան չի վերապահված հողամաս գնելու կամ էլ ժառանգելու և ոչ էլ նման ունեցվածք վաճառելու իրավունք. նրանք միայն վարձակալությամբ կարող են ձեռք բերել հողամաս ու տուն՝ վարձը հատուցելով տանտիրոջը, իսկ հարկը, մաքսը և հասը՝ մուծելով Հայոց Տան գանձարան[8]:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր գրավական է պետական պաշտոնյաների ազգային պատկանելությունը: Հաշվի առնելով նրանց աշխատանքային գործունեության բնույթը՝ «Որոգայթ փառացը» հայոց պետության գործերը ղեկավարելու իրավունքը՝ անկախ պետական իշխանության ոլորտից, վերապահել է բացառապես հայերին: Ազգային պատկանելության և Հայաստանյայց Սուրբ եկեղեցուն դավանելու պահանջը պարտադիր է եղել Հայաստանում պաշտոնական դիրք զբաղեցնող բոլոր ծառայողների համար: Փաստորեն, չանտեսելով անհատի գործարար հատկանիշները, օրենքը («որոգայթ փառացը») պետությանը ծառայություն մատուցող անձանց ընտրության հարցում շեշտը դրել է նրանց՝ հայ ազգին և հայոց առաքելական դավանանքին պատկանելու հանգամանքների վրա: Հիշյալ չափանիշների հաշվառմամբ է իրականացվել ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ պաշտոնյաների, ներառյալ՝ պատգամավորների, նախարարների, նրանց խորհրդականների, դատավորների, ատենախոսների, զորապետների, քաղաքային կառավարման պաշտոնյաների,

---

[6] Որոգայթ փառաց, Ե., 2002, էջ 74-75:

[7] ***Ավագյան Ռ. Հ.,*** Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ.-մ.թ.XIXդ.),2, Ե., 2002, էջ 49:

[8] Նույն տեղում, էջ 49-50

պետական տուրքերի օրինականությունը հսկողների և այլոց պաշտոնակալումը: Երկրի պաշտպանունակության ամրապնդման՝ իբրև ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղադրամասերից են ազգային լեզվի պահպանումը և ռազմական արվեստի ուսուցման արմատավորումը: Թերևս, այս իրողության հաշվառմամբ է «Որոգայթ փառացը» սահմանում Հայոց պետության ամբողջ տարածքում՝ գլխավոր մայրաքաղաքից մինչև ամենափոքրիկ գյուղի, նաև վրանաբնակ քոչվորների պարտականությունը՝ ըստ յուրաքանչյուր քաղաքի, գյուղի քսանհինգական տան հաշվով երկու ուսուցիչ՝ լեզվաբան և ռազմագետ պահելու վերաբերյալ: «Յուրաքանչյուր մանուկ՝ առանց սեռի խտրության, պարտավոր է հայերեն գրել և կարդալ սովորել, իսկ յուրաքանչյուր արական սեռին պատկանող մանուկ պարտավոր է զինվորական գործ սովորել»[9]:

«Որոգայթ փառացն» ազգային անվտանգության ապահովման խնդրին մոտեցել է նաև զուտ իրավագիտական տեսանկյունից: Հաշվի առնելով, որ պետության հիմքերը խարխլող օրենքներն ուղղակիորեն սպառնում են երկրի անվտանգության հիմքերին, այն սահմանել է, որ բոլոր տեսակի փաստաթղթերը՝ թե՛ առևտրային, թե՛ պայմանագրային և այլն, ում կողմից էլ ստորագրված լինեն, եթե հակասում են Հայաստանի օրենսդրությանը և մարդու բնական կենսագործունեությանը, չեղյալ են համարվում[10]:

«Որոգայթ փառացն» անտարբեր չի եղել նաև դրամի՝ իբրև համընդհանուր փոխարժեքի վավերականության խնդրի հանդեպ, ինչը մեծապես պայմանավորում է պետության տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետ քաղաքականությունը: Անդրադառնալով դրամի կազմությանը՝ լուսաբանվող աղբյուրը սահմանում է, որ դրամն ունենում է միայն 24 դրեթ ծանրություն և լինում է արծաթյա, ոսկյա, պղնձյա և կապարե, իսկ սովորական դահեկանը և տերունական դահեկանը լինում են միայն արծաթյա և ոսկյա[11]: Տնտեսական անվտանգության ապահովման կարևոր երաշխիքներից մեկը ապրանքային արժեքների ներմուծման և արտահանման ճիշտ քաղաքականությունն է, ինչի առթիվ «Որոգայթ փառացը» պարունակել է մի շարք կարևոր դրույթներ: «Ամեն մարդ ազատ է իր արտադրած ապրանքներն առևտրական նպատակներով արտահանել օտար աշխարհ, բացի զենքից, գործիքներից, ինչպես նաև բոլոր տեսակի ոսկյա և արծաթյա իրերից ու զինամթերքից» (հոդվ. 152): «Ամեն ոք, ով ոսկի և արծաթ է հանում Հայաստանից, եթե երաշխավոր է ներկայացնում, որ արտահանված հարյուր դահեկանի փոխարեն կներմուծի հարյուր երեսուն դահեկան՝ երկու տարվա ընթացքում, ապա թույլտվություն է ստանում արտահանելու՝ որքան կարող է» (հոդվ. 153): «Յուրաքանչյուր զենք և զինամթերք, որը ներմուծվում է Հայաստան, զերծ է հարկից և մաքսից» (հոդվ. 190):

«Որոգայթ փառացը» խստաբարո վերաբերմունք է ունեցել պետության անվտանգության հիմքերը խարխլող այնպիսի վտանգավոր երևույթի նկատմամբ, ինչպիսին կաշառակերությունն է: Այդ են վկայում չափազանց խիստ պատիժները,

---

[9] Նույն տեղում, էջ 98:

[10] Որոգայթ փառաց , էջ 133:

[11] Ավագյան Ռ., նշվ. Աշխ., հ. 2, էջ 104

որպիսիք նախատեսվում են հիշյալ գործունեության մեջ մեղավոր պաշտոնյաների նկատմամբ: «Յուրաքանչյուր իշխանավոր՝ սկսած ամենաբարձր պաշտոնյայից մինչև ամենացածրը, եթե մեղադրվում է կաշառակերության մեջ, զրկվում է փառքից ու մեծությունից և վերադարձնում է կաշառքը՝ ումից որ վերցրել է, նույնքան էլ մուծում է հայոց աղքատանոց, արժանանում է հրապարակային նախատինքի և իսպառ զրկվում է որևէ պաշտոն զբաղեցնելու հնարավորությունից (հոդվ. 170)»:

«Որոգայթ փառաց»-ում տեղ են գտել նաև էկոլոգիական անվտանգության (հոդվ. 257), պատերազմական ժամանակաշրջանում փաստաթղթային հաղորդակցության (հոդվ. 321-322), արտաղրության առանձին տեսակների (ոլորտների) մենաշնորհի (հոդվ. 356) և ազգային անվտանգության ապահովմանը վերաբերող այլ դրույթներ:

Ինչպես տեսնում ենք, ազգային անվտանգության ապահովման վերաբերյալ հայ իրավական մտքի հուշարձաններում առկա դրույթներից շատերը պահպանել են իրենց պիտանիությունը: Դրանք ոչ միայն ընկած են խնդրի կարգավորմանը ծառայող ներկայիս օրենսդրության հիմքում, այլև կարող են ուղեցույց հանդիսանալ հիշյալ օրենսդրությունը կատարելագործելու և այն արդի պայմաններին համապատասխանեցնելու ճանապարհին:

ОТРАЖЕНИЕ ПРОБЛЕМ ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В ПАМЯТНИКАХ АРМЯНСКОЙ ПРАВОВОЙ МЫСЛИ

ДЕРЦЯН Г. М.

Резюме

Одним из важных направлений внутренней и внешней политики государств является политика национальной безопасности, которая осуществляется средствами законодательства, определяющего структуру и деятельность органов, обеспечивающих государственную безопасность.

Органы национальной безопасности являются составной частью системы обеспечения безопасности РА. Они в рамках своей компетенции обеспечивают безопасность личности, общества и всего государства. В древних памятниках армянской национальной мысли существует множество положений об обеспечении национальной безопасности, которые сохранили свое значение. Они не только лежат в основе ныне действующего, регулирующего проблему законодательства, но также могут способствовать усовершенствованию упомянутого законодательства и приведению его в соответствие с нынешними условиями.